Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1022[2]-13.06.2016-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-167 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ, 4-րդ և 5-րդ պարբերություններ.

«Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը կրում է պատասխանատվություն իր՝ որպես անհատ ձեռնարկատեր ստանձնած պարտավորությունների կատարման համար:

Անհատ ձեռնարկատերն իրավունք ունի մինչև պետական հաշվառումից դուրս գալու դիմում ներկայացնելը հարկային մարմին դիմում ներկայացնել պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում անցնելու համար:

Եթե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը մինչև անհատ ձեռնարկատիրոջ՝ պետական հաշվառումից դուրս գալը չի դիմել հարկային մարմին օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում անցնելու համար, ապա հարկային մարմինն իրավունք ունի ֆիզիկական անձի մոտ օրենքով սահմանված կարգով իրականացնել պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից դուրս գալու օրվան հաջորդող երեք տարիների ընթացքում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության հեղինակը	**Առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունները**
ՀՀ կառավարություն	**Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 3-րդ հոդվածի 2 –րդ մասում 2.2) կետի փոխարեն գրել 2.2.-րդ մաս:**	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը**
ՀՀ կառավարություն (պատգամավոր պարոն Գ. Ջհանգիրյանի հետ համատեղ քննարկման արդյունքում)	Նախագծում լրացվող նոր 2.1 գլխի 15.2.-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ նախադասությունները խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ. *Դիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կառավարիչ է*	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:**

	նշանակում կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից սույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված թեկնածուին:		
ՀՀ կառավարություն (պատգամավոր պարոն Գ. Ջհանգիրյանի հետ համատեղ քննարկման արդյունքում)	**Նախագծում լրացվող նոր 2.1 գլխի 15.7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «գերակայություն» բառից հետո ավելացնել *սույն օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին համապատասխան:***	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:**
ՀՀ կառավարություն (պատգամավոր պարոն Գ. Ջհանգիրյանի հետ համատեղ քննարկման արդյունքում)	**Նախագծի 31-րդ հոդվածով փոփոխվող Օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ նախադասությունում «ստացած» բառից առաջ ավելացնել «գործունեությունից» բառը, իսկ «զուտ եկամուտներից» բառերի փոխարեն գրել «զուտ շահույթից (զուտ եկամուտ)» բառերը:**	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները և նախագծի հիմնավորումներում անդրադարձ է կատարվել «զուտ շահույթ» տերմինի մեկնաբանմանը:**